ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Նոյեմբերի 25-ին, առավոտյան ժամը 08.00-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեկնեց Սյունյաց թեմ՝ կապանում կառուցվելիք եկեղեցու հիմնօրհնեքը անձամբ կատարելու համար: Նորին Սրբությանը ընկերակցում էին «Էջմիածին» ամսագրի խմբագիր Բագրատ աբեղա Գալստյանը, Մայր Աթոռի միաբաններ Դերենիկ աբեղա Դավթյանը և Սամվել սրկ. Խաչատրյանը:

Գորիս տանող ճանապարհահատվածում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Սյունյաց թեմի Առաջնորդ Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը, Սյունյաց աշխարհի մարզպետ պրն. Սուրեն Աբրահամյանը և Գորիսի քաղաքապետ պրն. Սուրեն Խաչատրյանը:

Գորիսում, ավանդական աղ ու հացով ժողովրդական մեծաթիվ բազմությամբ դիմավորվելուց հետո, Վեհափառ Հայրապետը քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ վերակառուցվող եկեղեցում իր հայրական պատգամը տվեց հավաքվածներին: Այնուհետև Նորին Սրբությունն ուղևորվեց Սյունիքի մարզկենտրոն՝ Կապան քաղաք, ուր քաղաքային հրապարակում հանդիպեց և իր հորդորներն ու օրհնությունները բաշխեց խուռներամ ժողովրդին, ասելով.

«Սիրելի կապանցիներ.

Այս եկեղեցու օրհնությունը, նոր եկեղեցու կառուցումը շոշափելի փաստն է, պերճախոս վկայությունն է, թե մենք միայն չենք ունեցել եկեղեցի, էլի ունենում ենք այսօր և պիտի ունենանք վաղը,որովհետև մենք հավատք ունենք և հավատքը անցյալին չի պատկանի, հավատքը մարդ էակի հոգու ծաղկումն է, եթե այս հավատքը թառամի՝ մարդու հոգին կչորնա: Եվ այսօր եկեղեցու հիմնարկեքը պիտի լինի մի նոր մկրտություն բոլորիս համար, մի նոր Ս. Հոգու Աստուծո ուժին միացումը մեր ուժերին: Այսօր երկինք և երկիր կապանում համբուրվելու են, այսօր երկինք և երկիր միանալու են և մեր հոգիներից բխած հավատքը պիտի թանձրանան, շոշափելի արտահայտություն գտնի այս եկեղեցու կառուցումով:

Անհավասիկ, անցնող մեկ և կես տարիների ընթացքում ես առիթ եմ ունցել գնալու մեր հայրենի աշխարհի բոլոր անկյունները, տեսել եմ հնավանդ-քարակերտ շենքեր, շենքե՛ր, բայց ի՞նչ շենքե՛ր, հուշարձան են ասում Հայաստանում: Տաթևը հուշարձան չէ, Տաթևը Եկեղեցի է: Նորավանքը քար չէ, Հոգի է, Եկեղեցի է, բայց լռել են: Լռե՞լ էին մեր վանքերը, լռեցվել էին մեր վանքերը:

Իմ հայրական պատգամի վերջին խոսքը ես ցանկանում եմ այս դպրոցական երեխաներին ուղղել:

Սիրելի դպրոցականներ,

Նախանձը մեղք է: Հիսուս՝ Երկնային Վարդապետը իր Ավետարանում դատապարտում է նախանձը: Մենք էլ Հայոց Եկեղեցում

նախանձը նկատում ենք յոթը մահացու մեղքերից մեկը, բայց խոստովանեմ այսօր, որ մի տեղ նախանձը մեղք չէ. հիմա պիտի ասեմ որն է: Ես նախանձում եմ ձեզ, որովհետև չեմ կարողանա այդպես վառ աչքերով, պճլտուն նայվածքով, ուժեղ կամքով, ապագայատեսիլ, բարձրահայաց ձգտումով նայել կյանքին: Տեսե՛ք, մազերս էլ ճերմակում են, սպիտակում են. այս բոլոր մեծ-մեծ մարդիկ ինձ հոգնեցնում են, բայց որ ձեզ հետ եմ լինում, ասում եմ. ա՜խ ով Տեր ես էլ նրանց պես կարենայի լինել, ի՜նչ լավ կլիներ: Նախանձում եմ ձեզ և այդ նախանձը Հիսուս մեղք չի համարի, որովհետև բարի նախանձի համար եմ նախանձում, բարի նախանձ են ասում դրան: Հիսուս շատ սիրում էր փոքր երեխաներին, չափազանց սիրում էր, և իր մոտ հավաքվում էին, Նա Իր գրկում նստեցնում էր երեխաներին և մի օր այդ մեծ-մեծ առաքյալները չէին թողնում, որ փոքրիկները մոտենան Հիսուսին: Հիսուս սաստեց նրանց, ասեց. թույլ տվեք այդ երեխաներին ինձ գան: Եթե դուք այդ երեխաների պես չլինեք Աստծու թագավորության մեջ չեք կարող մտնել և եթե մի մեծ մարդ մի երեխայի գայթակղեցնի, սխալ ճանապարհի մեջ գցի լավ կլինի, որ նա իր վզից մի երկանաքար կապի և ինք իրեն ծովի մեջ գցի:

Պատկերավոր բառերով ասած երեխաները ազգի կյանքին գարունն են, ծաղիկն են: Եթե ծաղիկը չծաղկի, ինչպե՞ս պտուղ կտա: Հետևաբար, ես այսօր շատ ուրախացա, որ այսքան մեծ թվով դպրոցական երեխաներ տեսա: Աստված մեր այս սերունդը պահի:

Այժմ ես այսպես, որ քաղցր սիրով, Հայրապետական ողջույնով ձեզ բոլորդ ընդունում եմ իմ հոգու մեջ, և այս գիշեր բոլորդ աղոթքիս մեջ ներկա պիտի լինեք, խնդրում եմ, որ ինձ էլ, Մայր Աթոռի մեր միաբանությունն էլ ձեր աղոթքներում հիշեք և հիմա, որ գնանք և այդ եկեղեցու հիմքերին օծումը կատարենք, դա թող լինի մեզ համար պայծառակերպության և միության զորացման օր, ամբողջականության վերստեղծման օր և մեր հայրենիքի հառաջացման, զարգացման և ապահովության մի նոր գրավական: Ապրե՛ք»:

Այս ջերմ և խանդավառ հանդիպմանը հաջորդեց հրապարակից քիչ հեռու գտնվող կառուցվելիք եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը՝ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի: Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնի հեղմամբ առաքյալների, ավետարանիչների և մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի անունով օծեց եկեղեցու հիմքը հանդիսացող 16 քարերը, որոնք եկեղեցու կնքահայրերը զետեղեցին իրենց համապատասխան տեղերում: Վերջում Վեհափառ Հայրապետը հորդորեց կապանցիներին լծվել այս եկեղեցու շուտափույթ կառուցման գործին և սեփական քրտինքով ու աշխատանքով գմբեթավորել այն, որպես մեր ժողովրդի ապրող և կենդանի հավատքի վկայություն, ասելով.

«*Սիրելի կապանցիներ,*

Վստահ եմ, որ ձեր բոլորի հիշողության մեջ այս օրը պիտի մնա անջնջելիորեն գրված մի օր և դուք ձեր երեխաներին և գալիք սերունդներին պիտի պատմեք որ 1996 թ-ի նոյեմբերի 26-ին մենք Կապանում մի սքանչելի, հավերժախոս կառույց բարձրացրինք, որպես աստվածային

խոսքի քարոզության և Աստուծո ներկայության նշանը մեր հոգիներում և գալիք սերունդների հոգիներին: Եվ դրա համար ես ցանկանում եմ, որ այս հիմնաքարերը, որ օրհնվեցին, որ օծվեցին Ս. Մյուռոնով, այս քարերը իբրև հիմնաքար իրենց վրա տեսնեն վաղը հայկական կամարները և հայկական գմբեթը, և դուք կարենաք ասել, ամբողջ այս մարզում, որ կապանը եղավ առաջին այն համայնքը, որ կառուցում է նոր Եկեղեցի: Եվ դրա համար պատիվ եք շահելու, իսկ պատիվը դյուրին բան չէ շահել առանց քրտինքի, առանց աշխատանքի: Հետևաբար, այս եկեղեցու շինությանը դուք պետք է որ մասնակից դառնաք յուրաքանչյուրդ ձեր չափով և ձևով: Ես եղել եմ երկու անգամ Պարսկաստանի կողմից Արաքս գետի ափին, գնացել եմ մինչև Սուրբ Ստեփանոս նախավկայի վանքը, եղել եմ Ս. Թադեի վանքը և այդ վանքի քարերի վրա, ամեն մի քարի վրա մի հայկական անուն եմ կարդացել. հիշատակ է այս քարս Աստվածատուր Արտազեցու, հիշատակ է քարս Կիրակոսի: Եվ այսպես, ամեն մի քարի վրա մի անուն կա: Այսպես էլ ցանկանում եմ, որ այս կառուցվելիք Եկեղեցու մեջ ամեն մի կապանցի բերի իր բաժինը: Դա է գեղեցիկը, դա է եկեղեցի կառուցելու հարազատ, իսկական ոճը: Ապրե՛ք, և երկրորդ անգամ, որ գամ այստեղ եկեղեցին բարձրացած տեսնեմ և Աստված ինձ էլ մի քիչ երկար կյանք տա, որ իմ ձեռքերովը օծեմ այս եկեղեցին: Աստված ձեզ բոլորդ օրհնի:

Ձեր առաջնորդը և նաև հավատացյալներից ոմանք ցանկանում են, որ անուն տանք այս Եկեղեցուն: Մեր Եկեղեցու կանոնակարգի համաձայն անունը կտրվի այն օրը, երբ Եկեղեցին կօծվի: Բայց ես մարգարեական մի քիչ շնչով տոգորված ասում եմ այժմ, որ եկեղեցու անունը օծման օրը լինելու է Ս. Մեսրոպ Մաշտոց»:

Հավարտ սրբազան արարողության Նորին Սրբությունը հրավիրվեց Կապանի մշակույթի պալատ հյուրասիրության, որտեղ տեղի ունեցած զրույցին և երկխոսությանը ներկա էին Առաջնորդ Հայր Սուրբը, Սյունիքի մեծարգո մարզպետը, Կապանի նորընտիր քաղաքապետ պրն. Գագիկ Աթաջանյանը, թեմի հոգևորականները, մշակույթի գործիչները և բարձրաստիճան այլ անձինք:

Սյունյաց թեմի Կապան մարզկենտրոն մեկօրյա այցելությունից հետո, նոյեմբերի 26-ի վաղ առավոտյան, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Բ. Ա. Գ.